ԵՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ





«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ում 2026թ-ի ինը ամիսների ընթացքում կատարված աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



(010) 688204

reserveparksnco@env.am

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ում

2026թ-ի ինը ամիսների ընթացքում կատարված աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի /այսուհետ Կազմակերպություն/ ենթակայությամբ գործող՝ ԲՀՊՏ և ԲՊՏ տարածքներում 23598.62 հա մակերեսով տարածքի մոնիթորինգի, խնամքի, իրականացված միջոցառումների և կատարված աշխատանքների մասին՝

1. **«Էրեբունի» պետական արգելոց 118.75 հա ստեղծվել է 1981թ**
2. **«Որդան կարմիր» պետական արգելավայր 219.85 հա ստեղծվել է 1987թ**
3. **«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր 5202.86 հա ստեղծվել է 2009թ**
4. **«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայր 17.369.73 հա ստեղծվել է 2009թ**
5. **«Զիկատար» պետական արգելավայր 150 հա ստեղծվել է 2010թ**
6. **Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ 35 հա հիմնադրվել է 1933թ**
7. **Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան» դենդրոպարկ 1.944 հա հիմնադրվել է 1935թ**
8. **Բերդի «Սորաններ» դենդրոպարկ 62.17 հա հիմնադրվել է 1962թ**
9. **Իջևանի «Դենդրոպարկ» 14.6 հա հիմնադրվել է 1962թ**
10. **«Ջրվեժ» անտառպարկ 423.72 հա հիմնադրվել է 1977թ**

1. **Իրականացվելել են մոնիթորինգի և խնամքի միջոցառումներ՝**

Կազմակերպության ենթակայությամբ գործող տարածքներում մաքրվել են ճանապարհները, էտվել են ծառերի չորացած ճյուղերը: Տնկարաններում դրվել են կտրոններ և ցանվել սերմեր:

Լրացման կարգով «Զիկատար» պետական արգալավայրի պտղատու այգու տարածքում, Ստեփանավանի «Սոճուտ», Բերդի «Սորաններ» դենդրոպարկերում և «Ջրվեժ» անտառպարկում տնկվել են Գիհիի-Juniperus, Խեժափիճու-Larix, Մայրու-Cedrus, Մետասեքվոյայի- Sequoiadendron, Կեչու-Betula, Տանձենու-Pyrus, Բարդու-Populus, Հացենու-Fraxinus, Եղրևանու-Syringa, Բաղրջուկի-Hibiscus տնկիներ:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի 2026 թվականի «Գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարում» ծրագրի

շրջանակներում Կազմակերպության ենթակայությամբ գործող «Էրեբունի» պետական արգելոցում, «Որդան կարմիր», «Ձիկատար» «Հանքավանի ջրաբանական» և «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրերում, դենդրոպարկերում և անտառպարկում իրականացվել է մոնիթորինգ, արգելոցի վիճակի վերաբերյալ, վայրի ցորենների և ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների աճի և զարգացման վիճակի գնահատում արգելոցի և հարակից տարածքներում, ֆլորայի ուսումնասիրություն, դենդրոֆլորայի տեսակային կազմի ուսումնասիրություն, նոր ծառաթփատեսակների ներմուծում և կլիմայավարժեցում:

2. Կազմակերպության տարածքում գիտաճանաչողական գիտաարտադրական, էկոկրթական և հասարակության իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ ԲՈՒՀ- երի և ուսումնական հաստատությունների հետ՝

2.1. Գիտաարտադրական պրակտիկաների կազմակերպում և պայմանագրերի կնքում՝ անցկացվել է

- Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում անցկացվել է արտադրական պրակտիկա ՀՊՄՀ կենսաբանության քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի «Աշխարհագրություն» մասնագիտության մագիստրատուրա առաջին կուրսի ուսանողու հետ:
- «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում Նոր Գեղիի գյուղատնտեսական քոլեջի «Վայրի բույսերի հավաք և մշակություն» մասնագիտության 3-րդ կուրսի թվով 8 ուսանողների մասնակցությամբ անցկացվել է արտադրական պրակտիկա:
- Համագործակցության շրջանակներում Երևանի պետական համալսարանի Աշխարհագրության և երկրաբանության, ինչպես նաև Կենսաբանության ֆակուլտետների ուսանողները իրենց արտադրական պրակտիկան անցկացրել են Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում: Պրակտիկայի ընթացքում թվով 15 ուսանողների համար կազմակերպվել է ուսուցողական շրջայց, իրականացվել են բուսաբանական ուսումնասիրություններ, դաշտային հետազոտություններ, բույսերի տեսակների ճանաչում և տվյալների հավաքագրում:
- ՃՇՀԱՀ-ի Քաղաքային տնտեսություն և էկոլոգիա ֆակուլտետի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի Արփի Ավետիսյանը իր ուսումնական պրակտիկան անց է կացրել «Ջրվեժ» անտառպարկում:
- ՌԴ «Էկոնոմիկայի բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի աշխարհագրության և գեոինֆորմացիոն տեխնոլոգիաների ֆակուլտետի բակալավրի գլոբալ փոփոխությունների աշխարհագրություն և գեոինֆորմացիոն տեխնոլոգիաներ մասնագիտության 2-րդ կուրսի թվով 5 ուսանողներ դաշտային պրակտիկա են անցկացրել Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում:
- Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում արտադրական պրակտիկա են անցել Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հասարակական

գիտությունների ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության 2-րդ կուրսի թվով 8 ուսանողներ: Պրակտիկայի ընթացքում ուսանողները ծանոթացել են դենդրոպարկի գործունեությանը, տարածքի բնական և զբոսաշրջային ներուժին, այցելուների սպասարկման առանձնահատկություններին, ինչպես նաև էկոզբոսաշրջության կազմակերպման և զարգացման հնարավորություններին:

- 2026 թվականի մայիսի 19-ին «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպության հետ կնքվել է հողերի (հողամասի) կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ «Ջրվեժ» անտառապարկի 23,3239 հա տարածքի նկատմամբ կառուցապատման իրավունք տրամադրելու վերաբերյալ:
- 2026 թվականի հունիսի 23-ին կնքվել է 2026 թվականի փետրվարի 04-ին շրջակա միջավայրի նախարարության և «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի միջև կնքված ՇՄՆ-ԴՇ-26/05 պայմանագրին կից թիվ 1 համաձայնագիրը :

2.2. Բնակչության շրջանում էկոլոգիական իրազեկություն և էկոկրթություն՝

- Ս/թ. մարտի 21-ին՝ Անտառների միջազգային օրվա կապակցությամբ, «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել և իրականացվել է «ԷԿՈ-ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆ» 2 կրթական միջոցառում-մրցույթը: Միջոցառմանը մասնակցել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողները, ինչպես նաև Կոտայքի մարզի Ողջաբերդի միջնակարգ դպրոցի աշակերտները: Միջոցառմանը ներկա է գտնվել նաև Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության ներկայացուցիչը, ով իր մասնագիտական աջակցությամբ նպաստել է մրցույթի արդյունավետ կազմակերպմանը և մասնակիցների աշխատանքների գնահատման գործընթացին: Մրցույթի շրջանակում մասնակիցները ներկայացրել են իրենց կողմից պատրաստված տեսանյութերը՝ կազմակերպության կողմից առաջարկված բնապահպանական թեմաների շուրջ: Ներկայացված աշխատանքներն աչքի են ընկել ստեղծագործական մոտեցումներով, արդիականությամբ և բարձր որակով: Միջոցառման ավարտին բոլոր մասնակիցները պարգևատրվել են շնորհակալագրերով՝ ակտիվ մասնակցության և նախաձեռնողականության համար, իսկ առավել աչքի ընկած մասնակիցները՝ նաև խրախուսական նվերներով: Իրականացված միջոցառումը ևս մեկ անգամ ընդգծել է բնապահպանական կրթության կարևորությունը և երիտասարդների ակտիվ ներգրավվածության նշանակությունը շրջակա միջավայրի պահպանության գործում:Միջոցառմանը մասնակցել են թվով 25 մասնակիցներ:

- Ս/թ. ապրիլի 22-ին՝ Երկրի օրվա կապակցությամբ, Կազմակերպության և Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնի համագործակցությամբ «Ջրվեժ» անտառպարկում կազմակերպվել է բնապահպանական կրթական միջոցառում՝ նախատեսված հայրենադարձ երեխաների համար:
  Միջոցառմանը մասնակցել են 15 հայրենադարձ երեխա՝ ծնողների ուղեկցությամբ, որոնք ժամանել էին տարբեր երկրներից՝ Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից, Լատվիայից, Իսրայելից, Ռուսաստանից և Ուկրաինայից: Ծրագրի շրջանակում իրականացվել է ճանաչողական և բնապահպանական շրջայց, որի ընթացքում մասնակիցները ծանոթացել են անտառպարկի բնական միջավայրին, տեղական բուսական և կենդանական աշխարհին, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանության կարևորությանը: Մասնագետների ուղեկցությամբ ներկայացվել են բնության պահպանության և էկոհամակարգերի հավասարակշռության վերաբերյալ տեղեկատվական նյութեր: Միջոցառման կարևոր բաղադրիչներից է եղել ծառատունկը, որի ընթացքում երեխաները տնկել են ծառեր՝ նպաստելով շրջակա միջավայրի բարելավմանը: Բացի այդ, տեղադրվել են երեխաների կողմից նախապես պատրաստված և ձևավորված թռչնաբներ՝ նպաստելով թռչունների համար բարենպաստ կենսապայմանների ստեղծմանը: Իրականացված նախաձեռնությունը նպաստել է մասնակիցների բնապահպանական գիտելիքների ընդլայնմանը և բնության հանդեպ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը: Միջոցառմանը մասնակցել են թվով 30 մասնակիցներ:

- Ս/թ. մայիսի 1-ին հանդիսավոր կերպով մեկնարկել է Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկի զբոսաշրջային սեզոնը: Միջոցառման շրջանակում ներկայացվել են դենդրոպարկում իրականացված բարեկարգման և ենթակառուցվածքային զարգացման աշխատանքները, մասնավորապես՝ տեղադրվել են տեղեկատվական ցուցանակներ և ուղղորդող քարտեզ, ծառատեսակների անվանական պիտակներ, կառուցվել է սանհանգույց, ստեղծվել է ծառատեսակների վաճառքի առանձնացված անկյուն: «ԱՐՖԻՆ» վարկային կազմակերպության աջակցությամբ տարածքում տեղադրվել են թռչնի բներ: Միջոցառմանը մասնակցած դպրոցականների ներգրավմամբ իրականացվել է շաբաթօրյակ, իսկ համայնքի արվեստի դպրոցի սաների երաժշտական կատարումները նպաստել են միջոցառման տոնական մթնոլորտի ձևավորմանը: Օրվա ավարտին կազմակերպվել է ծառատունկ, որի ընթացքում տնկվել են մայրու և կեչու տնկիներ: Միջոցառմանը մասնակցել են թվով 60 մասնակիցներ:
- Ս/թ. հունիսի 05-ի Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա կապակցությամբ «Զիկատար» պետական արգելավայրում կազմակերպվել և անցկացվել է էկոկրթական միջոցառում՝ համայնքի երիտասարդների մասնակցությամբ, որի ընթացքում ներկայացվել են շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները, արգելավայրի դերը կենսաբազմազանության պահպանության գործում, իրականացվել են

ճանաչողական և գործնական բնապահպանական ակտիվություններ, ինչպես նաև ցուցադրվել է Հայաստանի կենսաբազմազանությանը նվիրված ճանաչողական ֆիլմ՝ նպաստելով մասնակիցների բնապահպանական գիտելիքների և իրազեկվածության բարձրացման: Միջոցառմանը մասնակցել են թվով 15 մասնակիցներ:

- «Զիկատար» պետական արգելավայրի այցելուների կենտրոնում Կողբ գյուղի դպրոցի աշակերտների համար կազմակերպվել են թեմատիկ ճանաչողական-կրթական քննարկումներ՝ ուղղված բնության հատուկ պահպանվող տարածքների, կենսաբազմազանության պահպանության, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի և շրջակա միջավայրի պահպանության կարևորության վերաբերյալ աշակերտների իրազեկվածության բարձրացմանը: Միջոցառմանը մասնակցել են թվով 15 մասնակիցներ:
- Բնության հատուկ պահպանվող տարածքների օրվան /սեպտեմբերի 13/ ընդառաջ Կազմակերպության նախաձեռնությամբ «Ջրվեժ» անտառպարկում իրականացվել է էկոկրթական միջոցառում՝ «Բնության պահպանվող տարածքները՝ կենսաբազմազանության պահպանման կարևոր օջախներ» խորագրով: Միջոցառմանը մասնակցել են Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 2, Ջրվեժի և Ողջաբերդի միջնակարգ դպրոցների աշակերտներն ու ուսուցիչները: Միջոցառման նպատակն էր ներկայացնել բնության հատուկ պահպանվող տարածքների նշանակությունն ու դերը կենսաբազմազանության պահպանության գործում, ինչպես նաև աշակերտներին ծանոթացնել «Ջրվեժ» անտառպարկի բուսական և կենդանական աշխարհին և նպաստել բնության նկատմամբ հոգատար ու պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը:
  Միջոցառման ընթացքում բնագետի կողմից ներկայացվել է անտառպարկի ֆաունան, մասնավորապես՝ տարածքում հանդիպող կենդանատեսակները, թռչնատեսակները, միջատները, սողուններն ու երկկենցաղները, դրանց կենսամիջավայրն ու էկոհամակարգում ունեցած դերը: Անդրադարձ է կատարվել նաև բուսական և կենդանական աշխարհների փոխկապակցվածությանը և կենսաբազմազանության պահպանության կարևորությանը: Միջոցառումն ուղեկցվել է ճանաչողական և ինտերակտիվ խաղերով ու կրթական ակտիվություններով, իսկ աշակերտներին տրամադրվել են բնապահպանական թեմատիկ ինտերակտիվ խաղեր՝ բնապահպանական գիտելիքների ընդլայնման և գործնական ներգրավվածության ապահովման նպատակով: Միջոցառմանը մասնակցել են թվով 50 մասնակիցներ:











2.3 Ռեկրեացիայի կամ հանգստի կազմակերպմանն ուղղված միջոցառումներ

Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում կազմակերպության գիտաշխատողների կողմից իրականացվել են ինտենսիվ էկոկրթական շրջայցեր՝ նախատեսված տարբեր տարիքային խմբերի և կրթական

հաստատությունների սաների, աշակերտների, ուսանողների, շահառուների և այցելուների համար: Շրջայցերի ընթացքում մասնակիցներին ներկայացվել են «Ջրվեժ» անտառպարկի բնական առանձնահատկությունները, բուսական և կենդանական աշխարհը, կենսաբազմազանության պահպանության նշանակությունը, ինչպես նաև բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի և շրջակա միջավայրի պահպանության կարևորությունը:
Էկոկրթական շրջայցերին մասնակցել են՝ «Դեղին արտույտ» մանկապարտեզի, Երևանի թիվ 110 մանկապարտեզի, «Հայ Ասպետ» և ՄՍՀԿ հարավային դպրոցների, Ջրվեժի, Ջրառատի, Շիրազի անվան թիվ 169, Երևանի թիվ 41, 77, 130, 158, 169, 181, 187, 197 դպրոցների, Երևանի թիվ 166 հիմնական և թիվ 69 դպրոցների, Էջմիածնի դպրոցի, «Արեգնազան», «Փոքրիկ Իշխան», «Մխիթար Սեբաստացի», «Անատոլ Ֆրանսի անվան ֆրանսիական» կրթահամալիրների, Երևանի պետական համալսարանի, այդ թվում՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի, Երևանի պետական բժշկական համալսարանի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի, «Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի» և «Ինֆորմատիկայի» քոլեջների, «Էկոկրթարան» կրթական կենտրոնի, «Անտիկյան կրթարան» կրթական կենտրոնի, «ԴԱՄ», «Happy DAY», «ՄԱՎ» և «Կանա» ուսումնական և կրթական կենտրոնների, «Դաչա» ցերեկային ճամբարի, «Նաիրի նետաձգության ակումբ» ՀԿ-ի, «Իմ ուղին», «Գիտակներ», «Աուտիզմ» ազգային հիմնադրամի, «Գառնիի արվեստի, մշակույթի և սպորտի», «Իմ Երազ», «Մանուկների ինքնազարգացման և առաջընթացի», «Շիվեր», «Ռեֆերանս լաբորատոր» կենտրոնների, «Էկոկրթարան»-ի և «Լեռնամանիա» արշավական ակումբի սաները, ուսանողները, շահառուները և այցելուները: Շրջայցերին ընդհանուր մասնակցել է ընդհանուր 2177 /159խումբ/ սան, ուսանող և այցելու:

2.4 Էկոզբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներ

- Կազմակերպության ենթակայությամբ գործող Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկը հյուրընկալել է Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի պետական համալսարանի դասախոսական կազմին և աշխարհագրության ֆակուլտետի ուսանողների մի խմբի/թվով՝ 20 մասնակից/: Այցի ընթացքում ուսանողները ծանոթացել են դենդրոպարկի կենսաբազմազանությանը, բնական առանձնահատկություններին և աշխարհագրական դիրքին: Այցի նպատակն է ուսանողների կողմից ստեղծել դենդրոպարկի տուրիստական քարտեզներ և թվային մոդելներ, որոնք հետագայում կտրամադրվեն դենդրոպարկին՝ զբոսաշրջային և կրթական նպատակներով օգտագործման համար:
- Կազմակերպության ենթակայությամբ գործող Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում մշակվել, պատրաստվել և տեղադրվել են տեղեկատվական ցուցանակներ և զբոսաշրջային քարտեզ, որոնք նպաստում են այցելուների

արդյունավետ կողմնորոշմանը, երթուղիների հասանելիության բարձրացմանը և դենդրոպարկի բնական ու զբոսաշրջային արժեքների վերաբերյալ իրազեկվածության ապահովմանը:

- Կազմակերպության ենթակայությամբ գործող Բերդի «Սորաններ» դենդրոպարկում և «Զիկատար» պետական արգելավայրում իրականացվել են այցելուների իրազեկվածության և տարածքում կողմնորոշման բարելավմանն ուղղված աշխատանքներ: «Սորաններ» դենդրոպարկում տեղադրվել են տեղեկատվական և արահետները ուղղորդող ցուցանակներ, որոնց միջոցով ներկայացվում են դենդրոպարկի պատմությունը, կենսաբազմազանությունը և հիմնադրի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև տեղադրվել են նստարաններ: «Զիկատար» պետական արգելավայրում տեղադրվել են տեղեկատվական և ուղղորդող ցուցանակներ, ինչպես նաև ավարտվել են դեպի Զիկատար լեռան գագաթ տանող ճանապարհի նշագծման աշխատանքները: Իրականացված աշխատանքները նպաստում են այցելուների համար տեղեկատվության հասանելիության բարձրացմանը, երթուղիների առավել հստակ և կազմակերպված ներկայացմանը, ինչպես նաև տարածքներում անվտանգ և հարմարավետ տեղաշարժի ապահովմանը:
- Կազմակերպությունը մասնակցել է «Tour Expo 2026» միջազգային մասնագիտացված զբոսաշրջային ցուցահանդեսին, որի շրջանակում ներկայացվել են ՊՈԱԿ-ի ենթակայությամբ գործող տարածքները, դրանց զբոսաշրջային և էկոզբոսաշրջային ներուժը, ինչպես նաև առկա էկոզբոսաշրջային արահետներն ու այցելուների համար առաջարկվող հնարավորությունները:
- 2026 թվականի ինը ամիսների ընթացքում Կազմակերպության ենթակայության տակ գտնվող «Ջրվեժ» անտառպարկում ունեցել ենք թվով 26595, Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում՝ թվով 48928, Բերդի «Սորաններ» դենդրոպարկում՝ թվով 3080 և «Զիկատար» պետական արգելավայրում թվով՝ 209 այցելուներ:







Դիտակետ դեպի
Ցիխ Ամրամի բերդ
Viewpoint to
Tsiik Amram Fortress


Թույաների արահետ
Thuja Trail




3km








2.5. Հասարակության լայն մասսաների իրազեկվածությանն ուղղված միջոցառումներ՝

- Կազմակերպության ենթակայությամբ գործող «Էրեբունի» պետական արգելոցի մասին նկարահանվել է ճանաչողական-վավերագրական ֆիլմ՝ նվիրված Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովին (COP17), որի նպատակն է ներկայացնել արգելոցի բացառիկ բնապահպանական նշանակությունը, կենսաբազմազանության պահպանության գործում ունեցած դերը և այնտեղ պահպանվող վայրի ցորենների համաշխարհային արժեքը՝ որպես մշակովի հացահատիկային բույսերի կարևորագույն գենետիկական պաշարի:
- Կազմակերպության ենթակայությամբ գործող «Որդան կարմիր» պետական արգելավայր են այցելել Շվեյցարիայի քաղաքացիներ Մարկուս Լանդմանը և Ուրսուլա Հինդերմանը՝ Հայաստանի բնական և պատմամշակութային ժառանգության, մասնավորապես՝ «Որդան կարմիր» պետական արգելավայրի և որդան կարմիր միջատի ուսումնասիրության նպատակով՝ հետագայում նախատեսվող գրքում ներկայացնելու համար: Այցի ընթացքում ներկայացվել են արգելավայրի բնական առանձնահատկությունները, կենսաբազմազանությունը, պահպանության նշանակությունը, ինչպես նաև որդան կարմիր միջատի կենսաբանական, պատմական և մշակութային առանձնահատկությունները:




2. **«Էրեբունի» պետական արգելոցում և հարակից տարածքներում, ՀՀ կարմիր գրքում գրանցված տեսակների գիտական ուսումնասիրություն, մոնիթորինգի իրականացում՝**

Իրականացվել է գիտարշավ «Էրեբունի» պետական արգելոցում: Գիտարշավը իրականացվել է երթուղային եղանակով, որի ընթացքում արձանագրվեց, որ վայրի ցորենների բուսուտները տեղ-տեղ նոսր էին, իսկ որոշ հատվածներում ավելի խիտ էին հանդես գալիս, վերջիններիս բարձրությունը 50-80 սմ էր: Հացազգիների հատիկները գտնվում էին կաթնային հասունացման փուլում, երթուղային ճանապարհներով անցնելիս գրանցվեցին՝ Հացազգիներից-Poaceae Ցորեն արարատյանի-Triticum araricum Jakubz, Ցորեն ուրարտուի - Tritikum urartu- Tumanyan ex Gandilyan, Ցորեն բեոտական կամ վայրի միահատիկի-Triticum boeoticum Boiss, Այծակն գլանաձև- Aegilops cilingrica Host, որոնք ուղեկցվում էին Փետրախոտով-Stipa և Բարդածաղկավորների-Asteraceae ընտանիքի Կանգար վարդագույն-Gundelia rosea տեսակով: Ցորենների բուսուտների մեջ այս տարի արձանագրվեց Գաղձի-Cuscuta մի քանի օջախներ: Արգելոցում օջախներով հանդիպեցին Տերեփուկ երևանյան-Centaurea erivanensis և Վարդատերեփուկ մուշկային-Amberboa moschata տեսակները: Նախորդ տարիների համեմատ Վարդատերեփուկի ցողունները ավելի կարճ էին: Կանգար վարդագույնը լայն տարածված էր արգելոցի հարակից տարածքում: Գիտարշավի ընթացքում հավաքվել է 17 թերթ հերբարիում, վերանայվում են տեսակային կազմի ցուցակները:

4. **«Որդան կարմիր» պետական արգելավայի ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրություն: Որդան կարմիր միջատի հաշվառում՝**

Իրականցվել է ֆլորայի ուսումնասիրություն «Որդան կարմիր» պետական արգելավայրի երկու տեղամասերում: Ջրառատի տեղամասում իրականացված ֆլորայի ուսումնասիրության ընթացքում գրանցվեց, որ Հացազգիներից- Poaceae Որդանախոտ աղասերը-Aeluropus littoralis նոր էր տերևակալել, արձանագրվեց, որ Ջրառատի տեղամասում Եղեգը Phragmites գերակշռում է մյուս բուսատեսակներին: Բարդածաղկավորներից -Asteraceae Եռակողմասերմիկ անհոտը - Tripleurospermum inodorum (L.) Sch.Bip. ծաղկել էր կղզյակներով:

Տեղացած անձրևների հետևանքով Ջրառատի տեղամասում առկա էին ջրափոսեր: Ուսումնասիրությունների շրջանակներում դրվել են 4 փորձահրապարակներ, որոնք նշվել են քարտեզի վրա՝ J1, J2, J3, J4:

- J1-փորձահրապարակում հաշվառվեց 5 տեսակ, որտեղ գերակշռում էին Թելուկազգիներից - Chenopodaceae՝ Բազմոտնուկ դաշտայինը Polycnemum arvense L.- 19 բույս, Հացազգիներից - Poaceae՝ Եղեգը – Phragmites 16 բույս:
- J2 փորձահրապարակում հաշվառվեց 7 տեսակ, որտեղ Թելուկազգիներից - Chenopodaceae՝ Բազմոտնուկ դաշտայինը Polycnemum arvense L. – 27 բույս, Հացազգիներից - Poaceae՝ Եղեգը – Phragmites 20 բույս:

- J3 փորձահրապարակում հաշվառվեց 5 տեսակ, Հացազգիներից – Poaceae ՝ Aeloropus littoralis- Որդանախոտ աղասերը 19, Եղեգը – Phragmites 9 և Թելուկազգիներից - Chenopodaceae՝ Բազմոտնուկ դաշտայինը Polycnemum arvense L. 19:
- J4 փորձահրապարակում հաշվառվեց 5 տեսակի բույս Հացազգիներից – Poaceae՝ Aeloropus littoralis- Որդանախոտ աղասերը 35 և Թելուկազգիներից - Chenopodaceae՝ Բազմոտնուկ դաշտայինը Polycnemum arvense L. 21 հատ:

Արազափի տեղամասում Որդանախոտի օջախները ավել շատ էին տարածված: Մասսայական տարածված էր Խաչածաղկավորներից-Brassicaceae՝ Կոտեմ խմրուկ բանջարը Lepidium perfoliatum L., համեմատաբար ավելի քիչ քանակներով հանդես էին գալիս՝ Հացազգիներից- Poaceae Որդանախոտ աղասերը – Aeluropus littoralis, Եղեգը – Phragmites, Բարդածաղկավորներից -Asteraceae Եռակողմասերմիկ անհոտը , Լոբազգիներից-Fabaceae՝ Ուխտափուշ սովորականը- Alhagi pseudoalhagi (Bieb.) Desv.:

Արազափի տեղամասում դրվել են 9 փորձահրապարակներ՝ A1, A2, A3, A4, A5, A6, A7, A8, A9 ավելի ճշգրիտ տվյալներ հավաքագրելու համար:

- A1 փորձահրապարակում հաշվառվել է 5 տեսակ, որտեղ գերակշռում էր Կոտեմ խմրուկ բանջարը Lepidium perfoliatum L. ՝ 80:
- A2 փորձահրապարակում հաշվառվել է 5 տեսակ, Կոտեմ խմրուկ բանջարը Lepidium perfoliatum L. ՝ 47,
  Որդանախոտ աղասերը – Aeluropus littoralis՝ 9:
- A3 փորձահրապարակում գերակշռում էր Որդանախոտ աղասերը – Aeluropus littoralis՝ 18, Եռակողմասերմիկ անհոտը -Tripleurospermum inodorum (L.) Sch.Bip.՝ 7:
- A4 փորձահրապարակում հաշվառվել է 6 տեսակ, որտեղ գերակշռում էին՝ Որդանախոտ աղասերը – Aeluropus littoralis՝ 18, Ուխտափուշ սովորականը- Alhagi pseudoalhagi (Bieb.) Desv.7:
- A5 փորձահրապարակում հաշվառվել է 8 տեսակ՝ Որդանախոտ աղասերը – Aeluropus littoralis՝ 21, Եղեգը – Phragmites՝ 8:
- A6 փորձահրապարակում հաշվառվել է 8 բուսատեսակ՝ Եղեգը – Phragmites՝ 21, Ուխտափուշ սովորականը- Alhagi pseudoalhagi (Bieb.) Desv.՝ 4:
- A7 փորձահրապարակում հաշվառվել է 5 տեսակ Եղեգը – Phragmites՝ 7, Որդանախոտ աղասերը – Aeluropus littoralis՝ 3:
- A8 փորձահրապարակում հաշվառվել է 7 տեսակ՝ Եղեգը – Phragmites՝ 12, Որդանախոտ աղասերը – Aeluropus littoralis՝ 9:
- A9 փորձահրապարակում հաշվառվել է 7 տեսակ՝ Որդանախոտ աղասերը – Aeluropus littoralis՝15, Եղեգը – Phragmites՝ 6:

Ս/թ սեպտենբբերի 23-ին իրականացնել է գիտարշավ «Որդան կարմիր» պետական արգելավայրի Ջրառատ և Արազափ տեղամասերում՝ Որդան կարմիր-Porphyrophora hammelii Brandt միջատի հաշվառման նպատակով:

2026 թվականի գարնանը տեղադրված 4 փորձահրապարակներից 2-ում

- J3 փորձահրապարակում գիտարշավի ընթացքում գրանցվեց 2 միջատի էգ առանձնյակներ
- J4 փորձահրապարակում հաշվառվեց 1 միջատի էգ առանձնյակ

Ջրառատի տեղամասում երթուղային եղանակով ևս իրականցվեց միջատի հաշվառում, որի ընթացքում հաշվառվեց 23 Որդան կարմիր միջատի առանձնյակներ՝ որից 22 էգ և 1 արու:

Արազափի տեղամասում տեղադրված 9 փորձահրապարակներից ՝

- A2 փորձահրապարակում հաշվառվեց 2 միջատի էգ առանձնյակներ
- A3 փորձահրապարակում հաշվառվեց 2 միջատի էգ առանձնյակներ
- A4 փորձահրապարակում 3 միջատի էգ առանձնյակներ
- A8 փորձահրապարակում 1 միջատի արու առանձնյակ

Արազափի տեղամասում երթուղային եղանակով ևս իրականցվեց միջատի հաշվառում, որի ընթացքում հաշվառվեց 49 Որդան կարմիր միջատի առանձնյակներ՝ որից 46 էգ և 3 արուներ էին:

Արգելավայրի 2 տեղամասերում էլ պայմանավորված տեղումների սակավությամբ նկատվում էր բուսականության ճնշվածություն:

5. «Ջերմուկի ջրաբանական» և «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրերի ֆլորայի և ֆանունայի ուսումնասիրությունների իրականացում, ջրհավաք ավազանների վիճակի գնահատում՝

U/թ. օգոստոսի 03-ին իրականացվել է գիտարշավ «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր ֆլորայի ուսումնասիրության նպատակով: Դեպի արգելավայր տանող ճանապարհի զգալի մասը գտնվում էր դժվարանցանելի վիճակում, ինչը պայմանավորված էր 2026 թվականի առատ տեղումների հետևանքով առաջացած հողի լվացմամբ:

Ճանապարհամերձ հատվածներում արձանագրվել են Օշինդրի- Artemisia L. և Սուսամբարի-Tanacetum L. ներկայացուցիչների գերակշռությամբ ձևավորված բուսուտներ, որոնք բնորոշ են տվյալ տարածքների չոր և կիսաչոր լանդշաֆտներին:

Արգելավայրերի տարածքում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բնական աղբյուրները չէին ցամաքել: Աղբյուրներին հարակից խոնավ կենսամիջավայրերը բնութագրվում էին հարուստ և փարթամ բուսածածկով, որտեղ արձանագրվել են Շուշանբանջարի-Chaerophyllum L., Տերևատի-Dapne., Խոնդատի-Verbascum L., Խորդենիի-Geranium L., Ձիվան հսկայականի-Cephalaria gigantea, Մասրենու Rosa L. և այլ տեսակները:

Ձորակային խոնավ հատվածներում գերակշռում էր Այծուռին-Salix caprea L., որը ձևավորում էր տվյալ կենսամիջավայրին բնորոշ ծառաթփային բուսականությունը: Մարմարիկ գետը վարար էր:

Դաշտային աշխատանքների արդյունքում հավաքվել է 32 herբարիում:

Ներկայումս իրականացվում են հավաքված նմուշների տեսակային ճշգրտումը և ցուցակներում դրանց գրանցման աշխատանքները:

2026 թվականի օգոստոսի 04-ին իրականացվել է գիտարշավ «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայր ֆլորայի ուսումնասիրության նպատակով: Ռազմական իրավիճակով պայմանավորված՝ «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի ամբողջ տարածքում հնարավոր չէր իրականացնել ազատ տեղաշարժ, ուստի գիտարշավն անցկացվել է միայն արգելավայրի հարավ-արևմտյան հատվածում:

Տարածքի բարձրությունների փոփոխությանը զուգընթաց դիտվել է բուսականության տիպերի աստիճանական փոփոխություն: Հիմնականում տարածված էին Խոնդատի - Verbascum L., Օշիդրի-Artemisia, Ձիվանի-Cephalaria, Ուրցի-Thymus, Անթառամի-Helichrysum, Ավելուկի-Rumex, Հազարանտերևուկի-Achillea, Սրոհունդի-Hypericum և Փետրախոտի (Սմբուլ)-Stipa ցեղերի ներկայացուցիչները: Հազվադեպ հանդիպում էին Մասրենու-Rosa թփեր և Տանձենու-Pyrus փոքր ծառեր:

Տարածքում առկա բնական աղբյուրները ջրառատ էին: Հավաքագրվել է 22 բուսատեսակի հերբարիումային նյութ, որոնց տեսակները ճշտվում են:

6. «Ձիկատար» պետական արգելավայրում Ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրությունների իրականացում: Հիմնական անտառկազմող տեսակների ուսումնասիրություն: Տնկարանի շահագործում՝ 1,8 հա:

Ս/թ օգոստոսի 18-19-ը իրականացվել է գիտարշավ «Ձիկատար» պետական արգելավայրում, որի ընթացքում ուսումնասիրվել է արգելավայրի բուսական ծածկույթը, մասնավորապես՝ անտառային էկոհամակարգերի տեսակային կազմը, անտառկազմող հիմնական ծառատեսակների տարածվածությունը, ուղեկցող ծառաթփային բուսականությունը, ինչպես նաև խոտաբույսերի բազմազանությունը: Արգելավայրի անտառային բուսականության հիմնական անտառկազմող տեսակներն են Հաճարենին-Fagus, Կաղնին-Quercus, Սոճին-Pinus և Բոխին-Carpinus: Նշված ծառատեսակներին ուղեկցում են մի շարք այլ ծառեր և թփեր, որոնք կազմում են անտառային համակեցությունների երկրորդային և ստորին բուսածածկույթը: Դրանցից առանձնացվել են Թխկին-Acer, Հացենին-Fraxinus, Հոնը-Cornus, Մասրենին-Rosa, Կտտկենին-Sambucus և Մոշենին-Rubus: Այս տեսակների համադրությունը ձևավորում է բազմաշերտ և տեսակային առումով հարուստ անտառային բուսականություն:

Արգելավայրի տարածքում ուսումնասիրվել է նաև խոտաբույսերի կազմը: Դաշտային դիտարկումների ընթացքում արձանագրվել են Սրոհունդի-Hypericum, Առյուծագիի-Leonurus, Կռատուկի-Arctium, Բլդրղանի-Heracleum, Ծվծվուկի-Silene, Եղերդակի-Cichorium և մի շարք այլ խոտաբույսերի տեսակներ: Նշված բուսատեսակները, կախված բնակավայրի պայմաններից, հանդիպում էին անտառի բացատներում և եզրային հատվածներում:

Արգելավայրի տարբեր կողմնադրություններում նկատվել են անտառային բուսականության կազմի որոշակի տարբերություններ: Հյուսիսային կողմնադրություններում Հաճարենու անտառային համակեցություններին հիմնականում ուղեկցում էր կաղնին, ինչը վկայում է տվյալ հատվածներում հաճարենու և կաղնու համատեղ

աճի և ձևավորված անտառային բուսականության կայունության մասին: Հարավային կողմնադրություններում կաղնու անտառներին առավել հաճախ ուղեկցում էին Լորենին-Tilia և Հացենին-Fraxinus: Այս տարբերությունները, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են տեղանքի միկրոկլիմայական առանձնահատկություններով, լուսավորության և խոնավության ռեժիմով, ինչպես նաև հողի պայմաններով:

Դաշտային ուսումնասիրությունների ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել անտառկազմող հիմնական տեսակների բնական վերականգնման գործընթացներին: Դիտարկումների արդյունքում պարզվել է, որ հաճարենու և կաղնու ինքնացան, բնական ճանապարհով առաջացած սերմաբուսակները գտնվում էին լավ վիճակում: Դրանց հետագա պահպանությունն ու աճի պայմանների մշտադիտարկումը կարևոր նշանակություն ունեն անտառային համակեցությունների կայունության և տեսակային կազմի պահպանման համար:

Գիտարշավի ընթացքում իրականացվել է նաև բուսական նմուշների հավաքագրում՝ արգելավայրի բուսական աշխարհի կազմի առավել ամբողջական ուսումնասիրության և տվյալների թարմացման նպատակով: Ընդհանուր առմամբ հավաքագրվել է 41 տեսակի բուսանմուշ: Հավաքված նյութը նախատեսված է տեսակային կազմի ճշգրտման, նախկինում առկա տվյալների լրացման և արգելավայրի բուսաբանական հավաքածուի թարմացման համար:

Իրականացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ արգելավայրի բուսականությունը բնութագրվում է բավականին բազմազան անտառային համակեցություններով: Անտառկազմող հիմնական տեսակների՝ Հաճարենու, Կաղնու, Սոճու համադրությունը ուղեկցող ծառաթփային և խոտաբույսային տեսակների հետ ապահովում է բուսական ծածկույթի բազմազանություն:

Գիտական ուսումնասիրությունների նպատակով, «Ջրվեժ» անտառպարկից տեղափոխվել և արգելավայրի այցելուների կենտրոնի հարակից կանաչապատված տարածքում տնկվել է 5 Սեքվոյադենդրոն հսկայական-Sequoiadendron giganteum Lindl. ծառատեսակի տնկի:

Արգելավայրում իրականացվել է տարածքի մաքրման աշխատանքներ: Տնկարանում կատարվել է քաղահ: Հավաքվել է Լորենու, Արջատխլենու, Նոճու սերմեր:

7.Դենդրոպարկերում՝ Ստեփանավանի «Սոճուտ», Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան», Իջևանի «Դենդրոպարկ», Բերդի «Սորաններ» դենդրոպարկերում և «Ջրվեժ» անտառպարկում բնական ու ներմուծված ծառաթփատեսակների բազմազանության և ֆլորայի հետազոտում, տեսակային կազմի՝ տեղական և ներմուծված ծառաթփատեսակների համալրման միջոցառումներ և վիճակի գնահատում:

Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ. Դենդրոպարկի տարածքը մաքրվել է չոր բուսազանգվածից: Խնամվել են ջերմատան տարածքում դրված կտրոնները: Այս տարվա տեղացած առատ ձյան հետևանքով կոտրվել է 2 (երկու) Եղևնի- Picea ծառատեսակներ:

Ուժգին քամիների հետևանքով կոտրվել են ծառերի ճյուղեր, վնասվել են ջերմատան ապակիները վերջիններս փոխարինվել են նորերով: Փոխվել է ջերմատան հողը: Խրամատից դուրս են բերվել Դրախտավարդի (հորտենզիայի)-Hydrangea ճյուղերը և կտրոնավորվել: Հավաքված Եղևնու-Picea կոները մաքրվել են և ցանվել սերմերը: Ցանվել են նաև Քաջվարդ-Paeonia arbonea ծառանմանի սերմեր: Տնկարանում իրականացվել է քաղհան, որոշ արամատակալներ և սերմնաբուսակներ ջերմատնից տեղափոխվել են տնկարան: Դրվել են Վարդի կտրոններ: Տարածքում իրականացվում են ամենօրյա խնամքի և մաքրման աշխատանքներ:

Դենդրոպարկ է նեմուծվել Թխկազգիների Aceraceae Թխկի արմավանման «Գարնետ» - Acer palmatum Garnet ծառատեսակը, որը նոր տեսակ է դենդրոպարկի համար: «Ջրվեժ» անտառպարկի տնկարանից դենդրոպարկ է տեղափոխվել Ոսկեծաղիկ մետաքսատերև - Chrysanthemum morifolium (Քրիզանթեմ) տեսակի բույսը՝ ծաղկային ձևավորումներ տալու նպատակով: Տնկվել են Խեժափիճիի-Larix, Մայրիի-Cedrus, Մետասեքվոյայի-Sequoiadendron, Կեչիի-Betula տնկիներ: Թարմացվում է դենդրոպարկի տեսակային կազմի ցուցակները:

Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան» դենդրոպարկ. 2026 թվականի տեղացած առատ ձյան հետևանքով կոտրվել է Սոճու- Pinus 1 (մեկ) ծառ:

Գիտարշավի ընթացքում գրանցվել է, որ դենդրոպարկի տարածքում ստեղծվել էին փոքրիկ ծաղկանոցներ, տարածքը խնամված էր և մաքուր: Տեսակային կազմը համալրվել էր հետևյալ 6 նոր ծառաթփատեսակներով.

Եղրևանի Մեյերի «Փալիբին» - Syringa meyeri «Palibin»
Եղևնի կանադական ձև կոնանման - Picea glauca f. Conica
Դրախտավարդ հուրանավոր (անճյուղաբուն) - Hydrangea paniculata (Stemm)
Սոճի լեռնային «Մուգհուս» - Pinus mugo «Mughus»
Թույա ծալքավոր «Վիփքորդ» (անճյուղաբուն) - Thuja plicata «Whipcord» (Stemm)
Գետնանոճի բթատերև - Chamaecyparis obtusa
Թարմացվում են տեսակային կազմի ցուցակները:

Իջևանի «Դենդրոպարկ»-ի տարածքում առկա են ընկած ծառեր, որոնք համարակալվել և արձանագրվել էին որպես չորացած ծառեր: Նախորդ տարիներից հավաքված նյութերը վերանայվում են, ճշտվում են ցուցակները: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է, որ դենդրոպարկում առկա են մի շարք չորացած արժեքավոր ծառատեսակներ: Առավելապես տուժել են Եղևինի, Բարդու, Դափնեկեռասի, Խեժափիճու, Եղևնու, Թույայի, Սոճու և Գետնանոճու ծառատեսակները: Չորացման հավանական պատճառներից մեկը դենդրոպարկում ոռոգման ջրի օգտագործման թույլտվության բացակայությունն է: Դենդրոպարկի տարածքը խնամված չէր. խոտածածկը

հնձված չէր, իսկ բուսական մնացորդների կուտակումները, զգալիորեն դժվարացնում էին ծառատեսակներից նմուշառման և տեսակների որոշման գործընթացը:

Բերդի «Սորաններ» դենդրոպարկ. Բուսական մնացորդներից բացվել և մաքրվել են դենդրոպարկի արահետները: Մշտադալար ծառաթփատեսակները մաքրվել են ձյան շերտից: Ձյունեջարդ է եղել 1 (մեկ) Եղևնի- Picea մշտադալար ծառատեսակ: Դրվել են Տոսախի-Buxus և Թույայի-Thuja կտրոններ, տնկվել են Հացենու-Fraxinus, Բարդու –Populus և Եղրևանու-Syringa տնկիներ:

Հնձվել է խոտածածկ տարածքը, հավաքվել են չորացած բույսերի մնացորդները, մաքրվել են արահետներն ու հանգստի տաղավարները, ինչի շնորհիվ տարածքը պահպանվել է մաքուր և այցելուների համար ապահովել հաճելի ու բարենպաստ միջավայր:

Դենդրոպարկում նախորդ տարիներին տեղափոխված բուսատեսակները նույնպես գտնվում են լավ վիճակում: Մասնավորապես, 2025 թվականին դենդրոպարկ ներմուծված նոր Սոճի Արմանդիի (Pinus armandii) ծառատեսակները առողջ աճ և զարգացում է ցուցաբերել:

Դենդրոպարկի տեսակային կազմի հարստացման նպատակով Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկի տնկարանից Բերդի «Սորաններ» դենդրոպարկ են տեղափոխվել երկու նոր թփատեսակներ՝ Վարդազգիների (Rosaceae) ընտանիքին պատկանող Կերիա ճապոնականը (Kerria japonica L. DC.), որն աչքի է ընկնում իր վառ դեղին ծաղիկներով, նուրբ ճյուղավորմամբ և բարձր դեկորատիվ արժեքով, ինչպես նաև Քաջվարդազգիների (Paeoniaceae) ընտանիքին պատկանող Քաջվարդ ծառանման (Paeonia arborea) տեսակը, որը հայտնի է իր խոշոր, գեղեցիկ և բուրավետ ծաղիկներով: Նոր թփատեսակների տունկը իրականացվել է լանդշաֆտային ձևավորման սկզբունքներին համապատասխան՝ ապահովելով տարածքի ընդհանուր գեղագիտական ներդաշնակությունը և ստեղծելով գեղեցիկ ու բնական լուծումներ:

Գիտական ուսումնասիրությունների և տեսակային կազմի համալրման նպատակով «Ջրվեժ» անտառպարկից տեղափոխվել և դենդրոպարկի տարածքում տնկվել են Սեքվոյադենդրոն հսկայականի-Sequoiadendron giganteum Lindl. 3 և Սոճի Էլդարյանի-Pinus eldarica Medw. 4 տնկիներ:

Թարմացվում է դենդրոպարկի տեսակային կազմի ցուցակները:

Կատարված աշխատանքների շնորհիվ Բերդի «Սորաններ» դենդրոպարկը շարունակել է զարգանալ որպես բնապահպանական և զբոսաշրջային կարևոր նշանակություն ունեցող կանաչ գոտի՝ նպաստելով տեղական և ներմուծված ծառաթփատեսակների պահպանմանը, ինչպես նաև բնակչության բնապահպանական իրազեկության բարձրացմանը:

«Ջրվեժ» անտառպարկ. Անտառպարկի տարածքից հավաքված հերբարիումներով ճշտվում է ֆլորայի տեսակային կազմը, թարմացվում ցուցակները: Տեղացած ձյան հետևանքով թափ են տրվել մշտադալար ծառաթփատեսակները, ճանապարները մաքրվել են ձյան շերտից: Ճանապարհամերձ հատվածները մաքրվել են բուսական մնացորդներից, էտվել են որոշ ծառերի չորացած ճյուղեր, թարմացվել բնաբաժակները և կրապատվել ծառերի

բները: Ստրատիֆիկացվել են Թխկու-Acer և Ձիականկի-Aesculus սերմերը: Հավաքվել են Սոճի ղրիմյանի - Pinus pallasiana կոներ, դրվել են Տոսախի-Buxus կտրոններ: Ջոդվել են վնասված ոռոգման ջրագծերը, հնձվել է ճանապարհների խոտը և ոռոգվել ծառերը: Մասնակի ներկվել է անտառպարկի ցանկապատը: Լրացման կարգով անտառպարկի տարածքում տնկվել են՝ Հացենու-Fraxinus, Գիհիի-Juniperus, Բաղրջուկի-Hibiscus, Տոսախի-Buxus, Վարդի-Rosa տնկիներ:

Գիտահետազոտական և կլիմայավարժեցման նպատակով ցանված, սակավաթիվ Սեքվոյադենդրոն հսկայականի-Sequoiadendron giganteum, Էլդարյան սոճու-Pinus eldarica և Սոճի արմանդի- Pinus armandii 2 տարեկան սերմնաբուսակները գտնվում են լավ վիճակում:

2024 թվականին ներմուծված՝ Սոճազգիների-Pinaceae ընտանիքին պատկանող Մայրի ատլասյան-Cedrus atlantica, Սոճի Արմանդի-Pinus Armandii և Վարդազգիների Rosaceae ընտանիքի Կերիա ճապոնական-Kerria japonica (L.) D ծառաթփատեսակները լավ վիճակում են:

Իրականացվում են անտառպարկի և դենդրոպարկերի տեսակային կազմի ցուցակների ճշգրտման աշխատանքներ:

8. Կազմակերպության եթակայությամբ գործող՝ «Զիկատար» պետական արգելավայրում, Ստեփանավանի «Սոճուտ», Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան», Իջևանի «Դենդրոպարկ», Բերդի «Սորաններ» դենդրոպարկերում և «Ջրվեժ» անտառպարկում իրականացվել է գարնանային ստուգումներ, հաշվվել է տնկանյութը, համարակալվել և պիտակավորվել են քամատապալ և ցցաչոր ծառերը, կազմվել են հաշվեգնահատման ցուցակները:
9. Հակահրդեհային միջոցառումների շրջանակներում «Էրեբունի» պետական արգելոցի, «Որդան կարմիր» պետական արգելավայի և «Ջրվեժ» անտառպարկի ճանապարհամերձ հատվածներում իրականացվել է հողի հանքայնացման աշխատանքներ:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Արա Ավագյան

Կատ.՝

գիտության և էկոտուրիզմի զարգացման բաժանմունքի պետ՝ Հայարփի Գրիգորյան

գիտական աշխատող՝ Սոնա Վարդանյան

էկոտուրիզմի մասնագետ - գիտական աշխատող՝ Սոնա Վարագյան